



Անկախ աուդիտորական եզրակացություն «ԷՅ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ մասնակիցներին

Մենք աուդիտի ենթարկեցինք «ԷՅ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա՝ կից ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2011թ. ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ պատասխանատվությունը ներառում է այնպիսի ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական խեղաթյուրումներից (թե սխալի, թե խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, ինչպես նաև տեղին հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառում, ողջամիտ հաշվապահական գնահատականների կատարում:

Աուդիտորների պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք սույն աուդիտորական եզրակացությանը կից ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք աուդիտորի վարքագծի կանոններին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք այնպես, որ ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Կիրառված ընթացակարգերի ընտրությունը կախված է աուդիտորի դատողությունից, ինչը ներառում է նաև ֆինանսական հաշվետվություններում այնպիսի էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը, որոնք կարող են պայմանավորված լինել թե խարդախությամբ և թե սխալներով: Այդ ռիսկերի գնահատումներն իրականացնելիս աուդիտորը հաշվի է առնում ներքին վերահսկողության համակարգը, որքանով այն տեղին է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար, որպեսզի նախատեսի աուդիտորական այնպիսի ընթացակարգեր, որոնք տեղին են տվյալ հանգամանքներում, բայց ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը նաև ներառում է կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելու և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորության գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում:

Մենք կարծում ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Էյ-Ի-Ջի Սերվիս» ՍՊԸ-ի և նրա դուստր կազմակերպության առ 31 դեկտեմբերի 2011թ. ֆինանսական վիճակը, ինչպես նաև գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը նույն ամսաթվին ավարտվող տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Արթուր Հարությունյան

Տնօրեն


«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

07 հունիսի 2012

Անուշ Գրիգորյան

Աուդիտոր



A handwritten signature in black ink, corresponding to Anush Grigoryan, the auditor.